ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

-- ----------ի 2026 թվականի №- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №517-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ««Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի մայիսի 11-ի ՀՕ-228-Ն օրենքի 22-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №517-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ ԷՄԱ կանոններ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ԷՄԱ կանոնների 23.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«23.1. Սպառողը, բացառությամբ Երաշխավորված մատակարարի սպառողի, իրավունք ունի էլեկտրական էներգիան արտադրելու կամ պահեստավորելու էլեկտրաէներգետիկական համակարգի մեկ կամ ավելի կետերում և սպառելու նույն կամ տարբեր կետերում՝ արտադրության կամ պահեստավորման կետում դարձափոխիչային (ռեվերսային) բազմասակագնային հաշվիչ տեղակայված լինելու պարագայում:».

2) ԷՄԱ կանոնների 32-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում «արտադրության համակարգի» բառերից հետո լրացնել « կամ էներգիա պահեստավորող կայանի» բառերը.

3) ԷՄԱ կանոնների 52-րդ կետի 2-րդ ենթակետում «արտադրվում» բառից հետո լրացնել « կամ պահեստավորվում» բառերը.

4) ԷՄԱ կանոնների 81.1-ին կետում «էլեկտրական էներգիան արտադրվում» բառերից հետո լրացնել « կամ պահեստավորվում» բառերը: Նույն կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ և երրորդ նախադասություններով.

«ԷՄԱ կանոնների իմաստով արտադրության կետից էլեկտրական ցանց առաքված էլեկտրական էներգիան ներառում է նաև պահեստավորման կետից էլեկտրական ցանց առաքված էլեկտրական էներգիան: Այն դեպքում, երբ էլեկտրական էներգիայի արտադրության և պահեստավորման կետերը տարբեր են, պահեստավորման կետում բաշխման ծառայության վճարը հաշվարկվում է միայն այդ կետում էլեկտրական ցանցից ստացված և նույն Հաշվարկային ամսում այդ կետից էլեկտրական ցանց առաքված էլեկտրական էներգիայի քանակների դրական տարբերության համար:».

5) ԷՄԱ կանոնների 88.1-ին կետի 2-րդ ենթակետում «էներգաարտադրող» բառից հետո լրացնել «, իսկ առկայության դեպքում՝ նաև պահեստավորող» բառերը.

6) ԷՄԱ կանոնների 88.4-րդ և 88.18-րդ կետերում «տեղակայանքների» բառը փոխարինել «էներգաարտադրող տեղակայանքների» բառերով.

7) ԷՄԱ կանոնների 88.5-րդ կետում «արտադրության կամ սպառման» բառերը փոխարինել «արտադրության կամ պահեստավորման կամ սպառման» բառերով, իսկ «արտադրության և սպառման» բառերը՝ «արտադրության, պահեստավորման և սպառման» բառերով.

8) ԷՄԱ կանոնների 88.7-րդ կետում «արտադրելու» բառից հետո լրացնել « կամ պահեստավորելու» բառերը.

9) ԷՄԱ կանոնների 88.29-րդ կետում «արտադրության կետերում արտադրված» բառերը փոխարինել «արտադրության և պահեստավորման կետերից առաքված» բառերով, իսկ «արտադրության և սպառման» բառերը՝ «արտադրության, պահեստավորման և սպառման» բառերով.

10) ԷՄԱ կանոնների 89-րդ կետում «արտադրելու» բառից հետո լրացնել «, պահեստավորելու» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի դեկտեմբերի 4-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- --------ի 2026թ.